ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«14» հոկտեմբերի 2025 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ՝ ՈՒՐԱՍԱՐԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի ուրասարցիներ,այսօր մենք նշում ենք Ուրասար գյուղի հիմնադրման 195-ամյակը: Սա ոչ միայն պատմական հոբելյան է, այլև գեղեցիկ առիթ՝ գնահատելու գյուղի անցած ճանապարհը, արժևորելու նրա բնությունը, մշակույթն ու հավատքը:

Ուրասարը Լոռու ամենագեղեցիկ անկյուններից մեկն է՝ օրհնված հիասքանչ բնությամբ և պատմաշակութային հուշարձաններով:

Այստեղ է գտնվում խորհրդավոր գեղեցկությամբ հայտնի Ջրաշուշանների լիճը, որը գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում և դարձել է յուրահատուկ տեսարժան վայր ոչ միայն բնակիչների, այլև բազմաթիվ զբոսաշրջիկների համար:

Ուրասարի կարևոր խորհրդանիշներից է նաև Սուրբ Աստվածածնի եկեղեցին, որը համախմբում է համայնքի հայ և ռուս հավատացյալ բնակիչներին և դարձել է ուխտատեղի ու հոգևոր զբոսաշրջության կենտրոն: Եկեղեցին իր պատմությամբ և հանգիստ մթնոլորտով բացահայտում է հավատքի ու մշակույթի խորությունը՝ գրավելով բազմաթիվ այցելուների:

Գյուղը շրջապատված է Բազումի լեռնաշղթայով, որի ամենաբարձր գագաթը գյուղի մոտակայքում գտնվող Ուրասար լեռն է՝ որպես տոկունության և վերելքի խորհրդանիշ:

Այս ամենը դարձնում է Ուրասարը ոչ միայն ապրելու, այլև բնության, պատմության և հավատքի միահյուսումը բացահայտող վայր:

Մաղթում եմ, որ Ուրասար վարչական բնակավայրը շարունակի զարգանալ՝ պահպանելով իր գեղեցիկ ավանդույթները, հյուրընկալությունն ու մարդկանց ջերմությունը:

Շնորհավորում եմ բոլոր ուրասարցիներին այս հոբելյանական օրվա առթիվ՝ մաղթելով խաղաղություն, բարօրություն և նոր հաջողություններ: Հուսով եմ, որ այս հրաշալի տոնը կդառնա ավանդույթ ինչպես ուրասարցիների, այնպես էլ բոլորիս համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ